# ԼՐՈՅ ԳԻՐ
## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԷՐԱ 14

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՓԵՏՐՎԱՐԻ 8։ ՈՐ Է ١٢٤٧ ՌԱՄԱԶԱՆԻ ١٨

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ։

## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Վեհափառ Ինքնակալն մեր՝ շապան ամսոյ 23 ին հինգշաբթի օրը՝ ղեսաւուր աղօթքը կատարելէն յետոյ՝ մեծաւ փառօք արքունական նաւատեղին (տէրսանէ-ամիրէ) [illegible] գայմագամ փաշայն, և Վէզիր քէհեասին, և Տէֆթէրտար էֆէնտին, և Րէյիս էֆէնտին՝ իր քովը բերել տուաւ․ և ասոնք և այլ մեծամեծները բոլորը միատեղ բարեփառ Ինքնակալին առջևը եկան և յերկիր խոնարհեցան։

Յետոյ բարեյաղթ Աշխարհակալը արքունի Թէրսխանէին մէջը եղած հարկաւոր բաներուն մտադրութեամբ նայեցաւ․ և նաւատորմիղը (Տօնանմայն) հետզհետէ շարժելու հրաման ըրաւ․ և ասով ուղիղ կարգադրութեանց վրայ իր ունեցած թագաւորական ջանքը և բարի կամեցողութիւնը յայտնեց։

Յետ այնորիկ իր Վեհափառութեան անուանովը կոչուած պատերազմական մեծ նաւը գնաց, և անոր ամէն տեղերը նայեցաւ․ և քանիմը տեղի վրայօք՝ պիտանի և աղէկ բաները իմացուց, և նոյն կերպովը շինելու հրաման ըրաւ։

Ասկէց մէկ երկու օր յառաջ Թէրսխանէին գլխաւոր միյմար Մուհամմէտ էֆէնտիին մէկ ձեռքին վրայ քերեստէ ինկած և վիրաւորուած էր․ անոր հինգ հազար ղրուշ պարգև տալով ուրախացուց․ և ասով Աշխարհակալին սրտի մօտ ծառայութիւն ընելու՝ բոլոր ծովային զօրքերուն փափագը շատցաւ։ Նաև Ինքնակալն ամէն մէկուն հոգւով չափ աշխատութիւնը և ջանքը՝ որ անձերնին չխնայելով իրենց վերաբերեալ գործքերուն մէջը կընէին, իր բարի աչքովը տեսաւ, և իրիկուան մօտ անկէ ետ դարձաւ։

Որ և վեհափառ անձն Տիեզերակալ Թագաւորին մերոյ՝ ամէն ցաւէ և վնասակար դիպուածներէ միշտ և հանապազ պահպանուած ըլլայ․ և անոր բազմագութ հովանաւորութիւնն՝ իր ամէն ծառայներուն և հպատակներուն վրայ հաստատ մնայ․ և ամէն չարկամները և հակառակ կեցողները՝ մօտ օրերս չքանան և խայտառակ ըլլան, ամէն։

Բարեբաղդ Ինքնակալին բաղձանքը և ջանքը՝ որ ունի բոլոր զօրաց գործքերուն կարգադրութեանը համար, ամենուն յայտնի է։ Ասկէց յառաջ չորրորդ նումերայով տպուած Լրոյ գրին մէջը գրուածին պէս, Էպուս և մեծ Գալէճմէզ և ուրիշ թնդանօթները՝ պատերազմական արհեստի տեղեակ եղողներուն հաճած և յարմար տե-

գ

ռած նորաձև կերպովը շինվելու և թափվելու համար՝ կամք և հրաման ըրած էր, և այնպէս շինել սկսած էին։

Այս անգամ որ է շապան ամսոյ 25 շաբաթ օրը՝ յիշեալ նորաձև Թնդանօթներէն ըմբընցածները ըստ կանոնի փորձելու համար՝ մեծազօր Արքայն հրաման ըրաւ։ Եւ այս Թնդանօթներուն ամէն մէկ չափին՝ առաջին սովորութեը վրայ 30 տրեմ վառօդ աւելցընելով՝ ռումբերը (կիւլլէները) դրին. և երբ նետելու վրայ էին, Արքային Թօփխանան գալու ազդարարութիւր եղաւ. և անոր համար փորձը մնաց։

Սա Ինքնակալն Չըրաղան կոչված ծովեզերեայ ապարանքէն ելաւ, և ցամաքով գնաց Թալիմխանէին հրապարակը եղած դարպասը (քէօշկը), և փորձըվելու Թնդանօթները նետելու հրաման ըրաւ։ Եւ բարեբաղդ Արքային գալովը յաջողեցաւ, որ ամէն մէկ Թնդանօթի նետվածքը՝ առջինէն կրկնապատիկ աւելի եղաւ։

Եւ նոյն ժամանակը Ինքնակալը իր բընական բարեգթութեբը՝ Թօփճի փաշայն և նազըր վէքիլի Արիֆ պէկը իրեն առջևը գալ հրամանն ըրաւ, և Փէրիզ [illegible] լէրպէկլիսի Ահմէտ փաշային հետը՝ բարեփառ Արքային նստած դարպասը մտան, և յերկիր խոնարհեցան։

Սա մեծազօր Թագաւորն անկէց քալելով մինչև Թնդանօթներուն նետված տեղը գնաց և տեսաւ. և վերոյիշեալ երկու անձինքը Ինքնակալին պատվական ոտքը պագնելով փառաւորվեցան. և պահեկներուն (գարաղուլներուն) և աղքատներուն առատ պարգևներ տալով ուրախացուց. և յետոյ եկած ճամբայէն ցամաքով ետ դարձաւ։

---

Արքունական Թէրսխանէին համար պէտք եղած պէքսիմէթները, նեղուցին մէջը Պէյքոզ կոչված տեղը եղեալ Պէքսիմէթխանէն կեփվէր. և այն՝ Թէրսխանէէն հեռու և ներսը փըլփըլկած էր. և իր մօտերը վազած ջուր չունենալով՝ պէքսիմէթի պէտք եղած ալուրը՝ Պէյքոզին դիմացը Կէօքսու տէրէսիին մէջը՝ յատկապէս անոր համար շինված աղօրիքները կաղացվէր. և ձմեռվան օրերը այն ալուրը Պէքսիմէթխանէն կըրելու, և պէքսիմէթը անկէց Թէրսխանէն տանելու դըժվարութիւն կը քաշվէր։

Անոր համար վեհափառ Ինքնակալը հրաման ըրաւ, և Թէրսխանէին մէջը նորէն գալէթայի փուռներ շինվեցաւ. և ամէն պիտոյքը հեշտ ըլլալուն համար՝ շատկէկ պէքսիմէթ եփվիլ սկսաւ։ Իսկ հին Պէքսիմէթխանէն ուրիշ պիտանի շինվածքի դարձունելու մտօք պիտի քակվէր. և ինչպէս որ 12 նումէրայով տըպված Լրոյ գրին մէջը յայտնի է, Պէպէքի մէջ պատահած հրդեհէն այրեցաւ. և նորէն Պէքսիմէթխանէ շինել պէտք չըլլալով՝ այն տեղը քանիմը գործարան (ֆապրիգայ) շինել միտք դըրված է։

---

Ժամանակէմը 'ի վեր Եպարքոսին ծառայութեն մէջը եղօղ՝ Տիվանի հիւմայունի խալէմիին գրագիրներէն Հէֆիզ պէկը, և Թահմիս գաւառին [illegible] տէթ պէկը՝ համձարեղ և ճարտար ըլլալնուն աղագաւ, Եպարքոսին կողմանէ երկուքին համար ալ Տիվանի հիւմայունի խօճակեանութեն պարգևելու խնդրվածք էր եղեր։

Եւ յիշեալ ամսոյն 24 ին բարեփառ Ինքնակալէն տըրված Հրովարտակին կերպովը՝ երկուքին ալ խօճակեանութեն աստիճաններ պարգևեցաւ. և Արքունական հրամանագիրը Եպարքոսին կողմէ խրկըվեցաւ։

---

Այժմեան Հալէպու բդեշխ և արապիստանի սպարապետ Մուհամմէտ փաշային հարկ և հրաման եղեր էր՝ Հալէպէն ելլալ և յառաջ գնալ. և ինքն ալ Անթէպի միւսէլլիմ իր քեռորդի Մուստաֆայ պէկին խոհեմ կառավարութիւնը ծանուցանելով՝ խնդըրվածք էր ըրեր, Հալէպի մէջ Գայմագամ ընելու, և Պէկլէրպէկլիւթեան աստիճան անոր պարգևելու համար։

Եւ խնդըրվածքը ընդունելի ըլլալով, շապան ամսոյ 24 ին Արքայական Հրովար-

տակով Պէկլէրպէկլիւթէ մասնիձան պարգևեցաւ Մուստաֆա պէկին. և Մուհամմէտ փաշային խափուքեհեասի Հասիպ էֆէնտին՝ իրեն ալ խափուքեհեասի ըրին և խըլաթ հագուցին։

---

Ինչպէս չորրորդ և հինգերորդ նումերոյով տպեալ Լրոյ գրերուն մէջը յայտնի կերևնայ, Եգիպտոսի բդեշխը ընդդէմ կամաց և հաճուէ վեհափառ Ինքնակալին, և ընդդէմ դատաստանի և իրաւանց՝ անհընազանդուէ գործքերու ձեռնամուխ ըլլալով Աքեայու վրայ զօրք ուղարկեր էր։

Նոյն բանիս վրայ եթէ յամառեալ մնայ, և խօսք չըմըռէ, դատաստանական վճիռը ՚ի գործ դնել կըհարկաւորի. այս պատճառովը պէտք եղած պատրաստութիւնները տեսնըւեցաւ։

Նաև բարեփառ Ինքնակալը բնութ ողորմած ըլլալով՝ յառաջագոյն խրատել յանձըն առաւ. և Աքեայու վրայ խըրկած նաւերը և Եգիպտոսի զօրքերը ետ քաշելու համար, Արքայական կողմանէ յատկապէս պատվիրանաց գիր, և Դէնպեաւին (Շէյխիսլամին) կողմանէ դատաստանական Թուղթ՝ անցեալները իրեն գրվեցաւ. և մեծի տէրուէն երևելի իշխանաւորներէն Հարէմէյն մուհասէպէճիսի Մուստաֆա նազիֆ էֆէնտիին հետը իրեն խըրկըվեցաւ։

Նոյն Նազիֆ էֆէնտին Աղէքսանդրիա հասաւ, և այս անգամ անկեց գրերը եկաւ. և անոնց մէջը Եգիպտոսի բդեշխին պատասխանները գրված էր. և մէջը քանիմը խնդըրվածքներ կայ, որ ամենևին մէկ ժամանակմը ոչ դատաստանական վճռով, և ոչ Թագաւորական կանոնով ըլլալու բան չէ։

Ասոր վրայ տալով և արթընցընելով կրկին անգամ իրեն խրատներ գրված է, որ իրեն այս անկարգ ցանկուէն ետ կենայ, դատաստանական վճռոյն և վեհափառ Ինքնակալին կամացը խոնարհելով՝ Աքեայի վրան գտնըված նաւերը և Եգիպտոսի զօրքերը շուտով ետ քաշէ։

Վերյիշեալ բդեշխը իր ծերուէ ատենը այս բանին վերջը վնասակար ըլլալը միտք բերելով, և մեծազօր Արքային կողմանէ իրեն եղած երախտիքը և բարերարուէը ճանչնալով՝ կըյուսացվի թէ շուտով կըհնազանդի։

Սակայն եթէ այս անգամալ՝ վերջը իրեն անձին վնաս բերող այս անկարգ ցանկուէն ետ չըդառնայ, և Աքեայու վրայէն զօրքերը ետ չըքաշելովը, և այն տեղերուն խռովուէը երկարելովը, տաճկական կրօնքին վերաբերեալ Արքունական Սիւրէին և հիւճճաճներուն քեապէ երթալուն արգելք ըլլայ, որ չըկարողանան երթալ։ Այն ժամանակը օգնականուէ յաւիտենականին այ՝ անոր զօրքերը ամենուն խայտառակ ընելու, և զինքը պատժելու գործադրուէը, դատաստանական վճռով և կրօնքի պարտաւորուէ հարկ կըլլայ։

Այս բաներուն նախապատրաստ գըտնըվիլը՝ մեծազօր Ինքնակալին հարկաւոր երևնալով, առաջ և ետքը ըրած պատրաստուէն հիմա կըկնապատիկ աւելի տաքնալով, ուրիշ բաներէն ՚ի զատ՝ Դօնեայու բդեշխ մեծարու Ալիշ փաշային, և կեսարիայու բդեշխ Օսման խայրի փաշային, և Մատէն էմինի Օսման փաշային, և ուրիշ վիճակներու և գաւառներու հրամանատարներուն սաստիկ պատվէրներ խըրկըվեցաւ, որ տեղերէն ելլան, և իրենց ձեռքի տակը պատրաստական գըտնըված բաղում զօրքերով Հալէպու դաշտը շուտով ժողվվին։

---

Տասներորդ նումերոյով տըպված Լրոյ գրին մէջը նշանակել կերպովը, Ինկիլիզտէրուէ կողմանէ յատուկ պաշտօնի վրայ կարգած՝ Քեանին անունով յարգելի անձին՝ ճերմակ ծովու նեղուցին մօտենալուն լուրը առնըվելով, ձիաւոր զօրքերուն երկրորդ զօրավար (միրալայ) Իսմէթ պէկը՝ հիւրընկալ (միհմանտար) խըրկըված էր. և նեղուցը գացած կըսպասէր. բայց ծովու վիճակ՝ և ձմռան եղանակ ըլլալուն աղագաւ, յիշեալ Քեանին ուշացաւ։

Նաև Իսմէթ պէկն իր գնդովը (ալայովը)՝ այս անգամ Դօնեայու կողմը գնալ

հարկաւոր ըլլալով, Թագաւորեալ քաղաքը կանչըւեցաւ . և անոր տեղը Խումպարաճիներուն զօրավար Խալիլ պէկը Հիւրընկալ դըրւելով խըրկըւեցաւ :

Բայց այս Հիւրընկալը մինչև երթայ հասնի, չըլլայ թէ քիչեան դեսպանը նեղուցը գայ . անոր համար Լաղըմճի պաշթաճիներուն միրալայ Մուհամմէտ պէկը՝ որ ուրիշ գործով այն տեղը գտնըւեր էր, քիչեան Խալիլ պէկին տեղը Հիւրընկալութէ պաշտօնը կատարելու համար հըրաման եղեր էր :

Իսկ դեսպանը նեղուցը հասած ատենը՝ Իսմէթ պէկը ետ դարձած գտնըւելով, և վերջի Հիւրընկալ Խալիլ պէկը տակաւին չըգացած ըլլալով, քիչեան Մուհամմէտ պէկը դեսպանը ընդուներ է, և շապանի 26 ին Թագաւորեալ քաղաքը հասեր է :

Նոյն դեսպանը միւս օրը սովորութէ կերպովը՝ իր խորհրդական նոտարին (սըրքեա Թիպլին) ձեռամբը՝ իր հասնիլը փաշայի դրանը իմացուցեր է . և մեծի տէրութէ կողմանէ՝ ինչպէս որ սովորութ է՝ ծաղիկներ մըրգեր և շաքարեղէններ ուղարկելով, բարի եկիր ըսելու և անձին վիճակը և առողջութիւնը հարցնելու սովորութիւնները ՚ի գործ դըրւեր է :

—

Շապանի վերջը հինգշաբթի օրը տասներորդ ժամին մօտ՝ Թագաւորեալ քաղաքին մէջը՝ Էկրի գափուին քովերը՝ Թէքֆուր սարայի ըսուած տեղը՝ Թօփալ սալա անուանով մէկուն տանը մէջ թոնիրը կը փըռընկի, և իրէն պառաւ մայրը երելով կը մեռնի . և կրակը ուրիշ մէկ կողմը չըդըպած, քովը եղած գարաղօլ խանէին զապիթները հասնելովը կը մարի :

---

## ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

—

Թօփճի փաշային, ֆ բարձրապատիւ պէկլէրպէկի Թահիր փաշային ջանացողութիւնը և յառաջադիմութիւնը յայտնըւելով, յառաջիմանէ Թօփճի փաշայ դըրւած ատենը՝ տըրւած նշանը փոխուելով, մէկ հատ գոհարազարդ պուլանթի նշան պարգև տըրւեր է :

—

Անկէց յառաջ Եպալըքոսին քովը եղող զօրավար (միրալայ) Հասան պէկին՝ Թագաւորեալ քաղաքը գալու համար հրաման եղեր էր, ինչպէս իններորդ նումերայով տպեալ Լրոյ գրին մէջը յայտնի է :

Նոյն Հասան պէկին ձեռքին տակը եղած հնգետասաներորդ գունդ հետևակ (եաեա) զօրքը՝ Ճանապարհին ամենևին նեղութիւն չըկրելով՝ ողջ առողջ Թագաւորեալ քաղաքը հասեր են . և արքայական ձմերոցներէն՝ Տավուտ փաշայի ձմերոցը (խըշլան) նստեցուցեր են :

—

Թիմարլու ձիաւոր զօրաց գունդերէն միրալայ Իսմէթ պէկին ձեռքին տակը եղած երկրորդ գունդին՝ մեծաղօր տէրութէ հրամանովը Ղօնեայ երթալնին անկէ յառաջ Լրոյ գրին մէջը յայտնի է :

Յիշեալ գունդին պատուանդամ՝ արքայական ձիաւոր զօրաց կրթեալ մուզիգաճիներով, ամբողջ մուզիգա արքայական պարգև տըրւեր է :

Նոյն միրալային խնդրուածքովը, և Սպարապետին հրաման տալովը, Սերասքէրի դրան ընդարձակ ասպարէզը (մէյտանը), իր կրթութիւնը ցոյց տալու մօտ՝ իր գնդէն չորս դաս ձիաւոր զատեց . և գնալէն մէկ օր յառաջ նոյն ասպարէզը բաւական ժամանակ իր կրթութէ արհեստը և ճարտարութիւնը յայտնի ըրեր է . և շապանի վերջը Թագաւորեալ քաղաքէն Իւսկիւտար անցնելով, հրամայեալ կողմը գնացեր է :

—

Պաղտատէն գալու վրայ եղող՝ Թիմարլը ձիաւոր զօրաց ութերորդ միրալայ Մուհամմէտ ալի պէկն ալ՝ Թագաւորեալ քաղաքը եկեր է :

---

Գոհունք պարգևաց յաւիտենականին Տ՟ր , բարեբաղդ Ինքնակալին բարեսրտութենէն՝ ձմեռուան ժամանակը առաւել բարեխառն ըլլալով՝ բոլոր ոչխարները արօտին մէջ պահպանեալ մնացին։ Եւ այս պատճառաւը Րեմեզանի առաջին օրէն սկսելով , կարգաւորեալ արքունական զօրաց ամէն մեկուն օրական տըրուած միսին , տասն և հինգական տրէմ միս աւելցնելու համար՝ Գասապ պաշի գըռնըլօղ Խօճակեան Շաքիր Էֆէնտին հաւատարիմ ըլլալով՝ Սպարապետին իմացուց . և նա վեհափառ Ինքնակալին խընդըրուածք ըրաւ . և խընդըրուածքը ընդունելի ըլլալով՝ հրաման տըրուաւ , և՚ի գործ դըրուեցաւ։

—

Շուպատ ամսոյն 9 էն՝ մինչև 18 , դարձեալ նոյն ամսոյն 22 էն՝ մինչև 28 , թէ միրիի միւպաեաներէն և թէ գնահատաւէ ռայիճի վրայ վաճառեալ զահրէներէն ըլլալով՝ տէրուէ շտեմարանը (ամպարը) մըտածներուն որքանութիւնն է։

| Ցորեն Քիլէ | Գարի Քիլէ | Գօգօրօզ Քիլէ. | | |
|---|---|---|---|---|
| ٠٨٩٨٠ | ٠٢٨٥٠ | ٠٠٠٠٠ | Մուտանեայէն եկածը։ | Միրի։ |
| ١٦٦٤٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Թէքիրտաղիէն եկածը։ | Միրի · ռայիճ · միւպաեա։ |
| ١٢٠٠٠ | ٠٥٨٠٠ | ٠١٥٧٠ | Վառնայէն եկածը։ | Տօպրըճայ։ |
| ٠٠٠٠٠ | ٠٤٥٠٠ | ٠٠٠٠٠ | Գավառնայէն եկածը։ | Տօպրըճայ։ |
| ٠٠٠٠٠ | ٠٠٥٠٠ | ٠٠٠٠٠ | Էրէկլիէն եկածը։ | Ռայիճ։ |
| ٠٠٨٨٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Պարութխանայի իլհալս եղած՝ մեծ Չէքմէճէյէն և գեղերուն տասնորդէն | |
| ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | եկածը։ | Միւպաեա։ |
| ٠٥٠٤٠ | ٠١٥٥٠ | ٠٠٠٠٠ | Պանտըրմայէն եկածը։ | Միրի։ |
| ٢٧٥٠٠ | ١٩٠٠٠ | ٠٠٠٠٠ | Թէրսխանէն եկածը։ | Ռայիճ · միւպաեա։ |
| ١٢٥٠٠ | ٠٧٠٠٠ | ٠٠٠٠٠ | Իզմիրէն եկածը։ | Միրի · ռայիճ։ |
| ١٢٠٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Գարաղաճէն եկածը։ | Միրի։ |
| ١٠٦٦٥ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Իզնիմիտէն եկածը։ | Միրի · միւպաեա։ |
| ٠٥٠٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Ղօլօսէն եկածը։ | Միրի։ |
| ٠١٦٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Սիլիվրիէն եկածը։ | Միւպաեա։ |
| ٠٠٠٠٠ | ٠٣٥٠٠ | ٠٠٠٠٠ | Սէլանիկէն եկածը։ | Միրի։ |
| ٠٠٨٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Գարամիւսալէն եկածը։ | Միւպաեա։ |
| ٠٥٨٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Չանտարլըէն եկածը։ | Միրի։ |
| ٠٣٨٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Պէրղուսէն եկածը։ | Ռայիճ։ |
| ١٢٣٢٠٥ | ٤٤٧٠٠ | ٠١٥٧٠ | | |

Յիշեալ ամսոյն 2 էն՝ մինչև 18 , և ս 22 էն՝ մինչև 28 , տէրուէ շտեմարանէն ելածներուն որքանութիւնն է։

| Ցորեն Քիլէ | Գարի Քիլէ | Գօգօրօզ Քիլէ. | |
|---|---|---|---|
| ٧٧٠٠٠ | ١٩٠٠٠ | ٠٠٠٠٠ | Հացագործներուն տըրուածը։ |
| ١٢٠٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Փըռանճըլաճիներուն ալուրին համար՝ Ունճիներուն տըրուածը։ |
| ٠٠٣٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Խաս փռան հարկաւորութէը համար տըրուածը։ |
| ٠٣٨٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Խարճի փռան հարկաւորութէը համար տըրուածը։ |
| ١٣٧٠٠ | ٠١٩١٦ | ٠٠٢٨٠ | Արքունի սեպհական զօրաց Թայինաթին համար տըրուածը։ |
| ٠٠٠٠٠ | ١١٧٠٠ | ٠٠٠٠٠ | Արքունի սեպհական զօրաց ձիերուն համար տըրուածը։ |
| ١٩١٦٠ | ٠٣٠٠٠ | ٠٠٠٠٠ | Մանսուրէ զօրաց Թայինաթին համար տըրուածը։ |
| ٠٠٠٠٠ | ٠٣٣٠٠ | ٠٠٠٠٠ | Մանսուրէ ձիաւոր զօրաց ձիերուն համար տըրուածը։ |
| ٠٠٥٢٩ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Մանսուրէ զօրաց աշուրէ եփելու համար տըրուածը։ |
| ٠٦٤٠٠ | ٠٠٦٠٠ | ٠٠٠٠٠ | Տէրուէ Թօփխանայի Թայինաթին համար տըրուածը։ |
| ٠٠٠٠٠ | ٠٢٣٩٢ | ٠٠١٢٠ | Դարձեալ ձիաւոր և հետևակներուն ձիերուն համար տըրուածը։ |
| ٠١٦٧٥ | ٠٠٢٠٠ | ٠٠٠٠٠ | Տէրուէ Խումպարախանէին համար տըրուածը։ |
| ٠٠٧٠٠ | ٠٠٠٠٠ | ٠٠٠٠٠ | Արքունի Ղալաթայ սարային համար տըրուածը։ |
| ١٣٥٢٦٤ | ٤٢١٠٨ | ٠٠٤٠٠ | |

Յիշեալ ժամանակներուն մէջը Գարամիւսալի , Թէքիրտաղի , Իզնիմիտի , Սիլիվրիի , Մահալըճի , Մուտանեայի , Կէմլէյիկի , Գարաղաճի , Իպրալիի , Վառնայի նաւահանգիստներէն (իսկելէներէն) վաճառականի և նաւապետի ապրանք ըլլալով՝ Ունխափանը եկածներուն որքանութիւնն է։

| Ցորեն՝ քիլէ | Գարի՝ քիլէ | Գօգօրօզ՝ քիլէ | Կէօրէկ՝ քիլէ | Ալուր՝ քիլէ |
|---|---|---|---|---|
| ٢٩٢٥ | ٢٣٠٢٦ | ٦٣٦ | ١٠٨٠ | ١٧٥٠٠ |

## ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

Ֆիլեմենկի Թագաւորը՝ Ֆիլեմենկ և Պելչիգա երկիրներուն մէկ զմէկէ բաժանելու, և սահմանները որոշելու համար, Լօնտրա քաղաքին դաշնադրութեան 24 պայմանները առհասարակ չընդունելու վրայ էր:

Սակայն Լօնտրայի մէջը կեցող իր երեսփոխանին (մուրախխասին) ձեռամբը՝ հինգ տէրութեան երեսփոխաններուն հաշտութեան վրայօք խօսակցութեան ըլլալու ժողովին մէջը՝ յիշեալ պայմաններուն մէկ քանինին չընդունելուն պատճառը յայտնօղ հասարակ գիրմը տրվաւ:

Գրին միտքը. Այս հինգ տէրութեանցը կողմանէ գումարեալ ժողովին մեծապէս յարգանք և պատիւ կուտար. և քանիմը պայմաններ Ֆիլեմենկի տէրութեան կանոնին, և ազատութեան, և յատուկ օգտին ընդդէմ ըլլալով՝ այն պայմանները ընդունելու արգելք եղած պատճառները՝ արիական կերպովմը մէկիկ մէկիկ կը յայտնէր և կըհամրէր:

Ֆիլեմենկի Թագաւորին՝ յիշեալ պայմանները չընդունելուն հիմը երեք բան էր. մէկը՝ խռովութենէն յառաջ երկու երկրին մէջը պատահած պարտքին բաժանման կերպը: Երկրորդը՝ Ֆիլեմենկի երկիրներուն մէջը եղած գետերուն և նեղուցներուն վրան Պելչիգայու ժողովրդոց նաւերը՝ առանց սահմանի կամ արգելման շըրջագայելուն ազատութի տրվելը: Երրորդը՝ Լօգսէնպուրկի տուքսութենը համար կարգադրութեան կերպը:

Ժողովին գլխաւորներէն մէկ քանին՝ Ֆիլեմենկի արքային այս բանիս դէմ կենալը տեսնալով՝ նորէն մտածմանց մէջ ինկան. և այս անգամ խօսակցութեան ժողովին մէջը վախճանմը տալու համար՝ նորէն պայմանագիրմը շինելու խօսք ըրին:

Ու որովհետև հինգ տէրութիք՝ Ֆիլեմենկ և Պելչիգա ազգաց մէջը եղած՝ կռուին առարկաները վերցընելու, և հաշտութի ընել տալու միջով ըրած ջանքերնին՝ ամենևին օգուտմը չըրաւ. անոր համար երկու ազգաց մէջի կռուոյ պատճառները՝ երկու ազգաց կամքին թողուցին որ վախճանմը տան. և անոնց մէջը ըլլալու պատերազմին՝ հինգ տէրութիքը չըխառնըվին. և մէկզմէկու հետ ընելու դաշինքները պայմանագրին մէջը գրելու միտք դրըին:

Սակայն Ֆիլեմենկ և Պելչիգա երկիրներուն օգուտը՝ ուրիշ Եւրոպայի տէրութեանց օգտին հետ կապակցեալ ըլլալովը, այս բանին չըկատարվելը շուտով իմացվեր է:

Վերջապէս գումարեալ խօսակցութեան ժողովին մէջը՝ հինգ տէրութեանց երեսփոխանները՝ երկու ազգաց ապահովութեանը և միմեանց հաւատարմութեանը արգելք եղող դըժվարին առարկաները որքան կարելի է յարմարելու միջով՝ կրկին խօսակցութի ըսկըսէընին, և յիշեալ 24 պայմաններուն՝ պատշաճաւոր կերպմը գտնալու հետևէընին՝ ըստոյգ ըլլալը, Լրոյ գրերուն մէջը գրած է:

## ԳՈՐԾՔ ԶԱՐՄԱՆԱԼԻ

Ռուսաց տէրութեանը մէջ՝ Լիթվանիա նահանգին սահմանները, Փելուգ անուն գիւղաքաղաքին քովերը՝ Տիմիթրի Գարապօղի անունով 168 տարեկան ծերմը՝ մինչև հիմա ողջ կեցած է, և այս ծերը՝ 2 զաւակ ունեցած է. մեծ զաւակը 120 տարեկան, և փոքրը 97. և ինքը երկու զաւակովը ոչխար արծօղ հովիւ եղած է. և տարիքին շատութեանը համար՝ եղած երկրին մէջը պատիւ ունեցած է. և ժամանակիս մարդկանց բերանը հրատարակել ըլլալը՝ Փեթըօպուրկի Լրոյ գրին մէջը գրըված է:

Սիկիլեայի արքային երկիրներէն սէպված՝ Սիկիլեա կղզիին մօտերը՝ որ առկէ յառաջ յանկարծակի հրաբուխ նոր կղզի մը վեր ելեցած էր, այժմ կամաց կամաց ծովին մէջը քաշվելու վրայ է:

Եթէ այն կղզին բոլորովին ծովով ծածկըվի՝ անկարծէք աւազուտմը կըձևանայ. և այն կողմերը անցնօղ դարձօղ նաւերը զգուշանալու համար՝ Աշխարհացոյցներուն վրայ նշանակվելը՝ Վենետիկի Լրոյ գրերուն մէջը գրըված է: